«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱ՝

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ

Հետազոտող ուսուցիչ՝ Արմավիրի մարզի «Նոր Արմավիրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասավար՝ Նորա Անսուրյան

Մենթոր ուսուցիչ՝ Արմինե Անտոնյան

ԱՐՄԱՎԻՐ-2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
- ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ
- ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ՝ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ
- ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ
- ԱՄՓՈՓՈՒՄ
- ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
- ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բնական է, որ մարդկանց մեծամասնությունը դպրոցով հետաքրքրված է այնքանով, որքանով այն վերաբերում է այնտեղ սովորող իրենց երեխաներին: Ընդհանրապես սա ճիշտ է նաև դպրոց այցելողների տեսանկյունից, ովքեր այս կամ այն չափով ծանոթանում են, թե դպրոցում երեխաների հետ իսկապես ինչ է արվել, ինչը կարող են տեսնել սեփական աչքերով, և հազվադեպ է մեկը ցանկություն ու ժամանակ ունենում քննարկելու հիմնախնդրի ուղղությամբ արված աշխատանքը: Դպրոցը չի կարող իր աշխատանքի նկատմամբ այդպիսի հայացքն անուշադրության մատնել, քանի որ միայն դրա հետ հաշվի նստելով է հնարավոր պահպանել ծնողների վստահությունը և դրա հետ միասին պահել աշակերտներին: Դպրոցներում իրականացվող կրթադաստիարակչական գործընթացը բարդ ու բազմաբովանդակ գործունեություն է: Հետևաբար հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների արդյունավետ դաստիարակչական գործընթացի կազմակերպման համար կարևոր նշանակություն ունի դպրոցի և ընտանիքի փոխհարաբերությունը: Ոստի սովորողների դաստիարակությունը ու զարգացումը ապահովելու համար կարևոր նշանակություն է ձեռք բերում նաև հոգեբանական խորհրդատուների աշխատանքը ծնողների հետ: Սույն աշխատանքում մենք քննարկել ենք հոգեբանական խորհրդատուի աշխատանքը կապված ծնողների հետ: Սովորողների կրթության շրջանակներում կարևոր է պահպանել ծնող-դպրոց-դպրոցական հոգեբան կապն, որն կնպաստի երեխաների ուսուցման գործընթացի զարգացմանը, կբարձրացնի երեխաների կրթության և դաստիարակության մակարդակը: Բացի շարադրվածից հարկ ենք համարում նշել, որ ընտանիքը պատմականորեն եղել և մնում է հիմնական այն սոցիալական ինստիտուտը, որն ապահովել է հասարակության վերարտադրումը: Ընտանիքն է ձևավորում անհատի զարգացումը նրա բոլոր դրսևորումներով՝ ֆիզիկական, մտավոր, բարոյական և հոգևոր և հիմք է ստեղծում նրան ձևավորող բոլոր այլ սոցիալական ինստիտուտների համար:

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ

<<Բոլոր երջանիկ ընտանիքները նման են իրար, յուրաքանչյուր դժբախտ ընտանիք դժբախտ է յուրովի>>

Լ.Ն. Տոլստոյ

Ընտանիքում են ձևավորվում հասարակությունում ընդունված նորմերի ընկալումը, հասարակական գործունեության ու աշխատանքի նկատմամբ վերաբերմունքը և այլն: Դեռևս հնագույն ժամանակներից մեր ազգի համար ընտանիքը կարևոր, նույնիսկ առաջնային տեղ է գրավել: Ընտանիքի շնորհիվ մենք, ենթարկվելով դարերի փորձությանը և կրելով ժամանակի ազդեցությունը, շարունակում ենք պահպանել մեր ազգային նկարագիրը: Ընտանիքը համարվում է կարևոր գործոն անհատի սոցիալական ստատուսի գնահատման համար: Կարելի է ասել, որ հայկական ընտանիքում դրսևորվում են ընտանիքը բնութագրող հատկանիշները: Այսինքն՝ մեզ մոտ մեծ է ընտանիքի դերը մեր սովորույթների, արժեքների, նորմերի փոխանցումն ապահովելու գործընթացում: Հենց ընտանիքում են ձևավորվում մեր դավանանքի, ազգի պատկանելիության զգացումը: Ընդհանուր ասած՝ հայկական ընտանիքը հիմքն է մեր հասարակության ձևավորման ու զարգացման համար: Անցած դարի վերջին 20-ամյակից հայկական ավանդական ընտանիքի մոդելն ու հասարակական ընկալումները սկսել են փոխվել: Դրան նպաստել են նաև տարածաշրջանում պատերազմները, դրանց հետևած տնտեսական և սոցիալական ցնցումները: Հայ ընտանիքի կայուն հիմքերի թուլացումը

տեղի է ունենում նաև մեր օրերում՝ հատուկ, նորաձև փոփոխությունների ազդեցության ներքո: Փորձեր են արվում «գլոբալացնել» հայկական ավանդական ընտանիքն ու ընտանեկան ավանդույթները: Օտար բարքերի անարգել թափանցումը Հայաստան, դեռևս ոչ լիարժեքորեն ձևավորված հասարակական հարաբերությունները, ընտանիքի վերաբերյալ ազգա- յին բովանդակությամբ պետական օրենքների անբավարարությունը ժամանակակից հայ ընտանիքը կանգնեցրել են մի շարք լուրջ խնդիրների առջև, որոնք խորը մտահոգության տեղիք են տալիս: Այդ երևույթների հիմնական պատճառ է հանդիսանում ազգային արժեհամակարգի փոփոխությունը: Հայ ազգը դարեր շարունակ ուներ իր որոշակի արժեքային համակարգը, որոշակի բարոյական նորմերը, որոնց հետևում էր հանրությունն իր ազգային, առօրյա կյանքի ընթացքում: Մերօրյա ժամանակներում, այսպես կոչված, «հին նորմերի» հետևորդները համարվում են հետամնաց և որակվում են որպես հին մտածելակերպի կրողներ: Այսօր երիտասարդների մոտ ընտանիք հասկացողությունն իր ավանդական արժեքը չունի, որովհետև ընտանիք ստեղծելու միտումը փոխվել է հանրային կենսաընկալման մեջ: Այսօր՝ Հայաստանի սոցիալ-տնտեսական պայմաններում, երիտասարդ ընտանիքը հնարավորություն չունի բնակարան ձեռք բերելու, որի պատճառով նաև հետաձգվում են ամուսնությունները: Նաև երեխաների թիվը երիտասարդ ընտանիքում խիստ նվազագույնի է հասցվել: Հաճախ երիտասարդ ընտանիքներին օգնում են նրանց ծնողները: Երբեմն դա լինում է ֆինանսական օգնության տեսքով: Այդ պատճառով ծնողները, երբեմն նույնիսկ բարեկամները, իրենց պարտքն են համարում երիտասարդների ընտանեկան խնդիրները լուծողի դերը ստանձնել: Այսօր վտանգված է հայ ընտանիքի ամրությունը, հետևապես՝ խարխլվում են մեր ազգային հիմքերը: Եթե նախկինում հայոց կենցաղին գրեթե խորթ էր ամուսնալուծությունը, ապա մեր օրերում այն զգալիորեն աճել է: Հատկապես անհանգստացնող է այն փաստը, որ ամուսնալուծությունների մեջ մեծ տեղ են զբաղեցնում երիտասարդ ընտանիքները: Դրա պատճառները բազմազան են, բայց այդ

ամենի հետևանքով մենք ունենում ենք միայնակ մայրերի և անօթևան երեխաների թվի աճ: Սա լուրջ խնդիր է մեր հասարակությունում ընտանիքների պահպանման համար: Տեղեկատվական միջոցների զարգացման, նաև գլոբալացման հետևանքով ինֆորմացիայի աճող հոսքերը մեծ ազդեցություն են ունենում մեր հասարակության մտածելակերպի վրա: Այլ ազգերին բնորոշ նորմերից մի շարք արժեքների ընդօրինակումը հատկապես երիտասարդների շրջանում հիմք են ծա- ռայում մեր արժեքների թուլացման համար, ինչը նաև հանդիսանում է ամուսնալուծությունների թվի աճի պատճառներից մեկը: Ընտանիքների թվի նվազման՝ որպես կարևոր հետևանք է հանդիսանում ծնելիության նվազումը, ինչը բացասականորեն է ազդում մեր երկրի տնտեսության վրա: Այն հանգեցնում է մարդկային կադրերի նվազման, ներքին աշխատաշուկայում առաջարկի և պահանջարկի անհամապատասխանության, որը հանգեցնում է արտադրողակա- նության նվազման: Գիտնականները նշում են նաև մի հետաքրքիր կախվածություն. այն երկրների երիտասարդները, որտեղ բարձր է գնահատվում ջանասիրաբար աշխատելու և նյութական հաջողության հասնելու էթիկան, հաճախ համապատասխանում են «ընտանեկան ուղղվածությամբ» մոդելին: Պանդխտությունը հայոց դարավոր ցավն է՝ իր բոլոր անցանկալի հետևանքներով: Այսօր էլ երկրից մեկնած շատ հայորդիներ, լքելով ընտանիքը, ամուսնանում են օտարների հետ: Եթե առաջներում արտագնա աշխատանքի մեկնում էին միայնակ, ապա այսօր մեկնում են նաև ընտանիքներով: Դա արտաքուստ ունի իր դրական կողմը՝ ամուսինները միասին են լինում, և հիմնականում բացառվում է ամուսնու կողմից նոր ընտանիք կազմելու հնարավորությունը: Բայց, իրականում, նորաստեղծ շատ ընտանիքներ կտրվում են հայրենիքից, երկիրը դատարկվում է, ազգը զրկվում է երիտասարդ, եռանդուն աշխատուժից: Երեխաները հաճախում են օտարալեզու դպրոցներ, զրկվում մայրենի լեզվով կրթություն ստանալու հնարավորությունից, կտրվում են ազգային արմատներից: Անցած դարի վերջին քսանամյակից սկսած՝ հայ ավանդական ընտանիքի մոդելն ու հասարակական

ընկալումները սկսել են փոփոխվել: Նորաձև ռեֆորմների և արդի սոցիալ-տնտեսական պայմանների ազդեցության ներքո տեղի են ունենում հայ ընտանիքի ավանդական հիմքերի թուլացում ու ազգային արժեհամակարգի փոփոխություն: Ծնելիության նվազման պատճառով նվազագույնի է հասել երիտասարդ ընտանիքներում երեխաների թիվը, զգալիորեն աճել է ամուսնալուծությունների, միայնակ մայրերի և անօթևան երեխաների թիվը[1]:

Կրթության, ուսուցման և ընտանեկան դաստիարակության շրջանակներում կարևոր է պահպանել ծնող-դպրոց-դասղեկ կապն, որն կնպաստի երեխաների ուսուցման գործընթացի զարգացմանը, կբարձրացնի երեխաների կրթության և դաստիարակության մակարդակը:

Դասղեկի և ծնողների համագործակցության բովանդակությունն իր մեջ երեք հիմնական ուղղություններ է ներառում՝ ծնողների հոգեբանամանկավարժական տեղեկացվածությունը, նրանց մասնակցությունը ուսումնա-դաստիարակչական գործընթացին և նրանց մասնակցությունը դպրոցի կառավարմանը:

Ծնողների հոգեբանամանկավարժական տեղեկացվածությունը ենթադրում է ընտանիքների հետ աշխատանքի հետևյալ ձևերի կազմակերպում.

- ծնողական համալսարաններ,
- կոնֆերանսներ,
- անհատական և թեմատիկ խորհրդատվություններ,
- ծնողական ժողովներ,
- սեմինարներ,

Ծնողներին դասարանի ուսումնադաստիարակչական աշխատանքներին կարելի է ներգրավել՝ կազմակերպելով գործունեության հետևյալ ձևերը.

[1] Инклюзивное образование, URL:// http://www.mou13school.narod.ru/inklyuziv_obr.html:

- երեխաների ու ծնողների ստեղծագործության օրեր,
- բաց դասեր ու արտադասարանական միջոցառումներ,
- մասնակցություն դպրոցի ու դասարանի աշխատանքներին,
- ծնողական հսկողության սահմանում դասարաններում:

Ծնողների մասնակցությունը դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարմանը կարելի է կազմակերպել հետևյալ ձևերով.

- դասարանի ծնողների մասնակցությունը դպրոցի խորհրդի աշխատանքներին,
- դասարանի ծնողների մասնակցությունը ծնողական խորհրդի աշխատանքներին,
- ծնողի մասնակցությունը դպրոցի կազմակերպչական աշխատանքներին: Օգտագործելով համագործակցության և զրույցի մեթոդը դասը կարելի է անցկացնել ավելի հետաքրքիր,ծնող_ուսուցիչ_աշակերտ կապը պահելով:Տառ_ուսուցման ժամանակ շատ մեծ ազդեցություն ունի նաև ծնողը:Դասը հետաքրքիր և յուրօրինակ ներկայացնելու համար դասին կարելի է ներգրավվել ոչ միայն աշակերտներին այլ նաև ծնողներին:Ամեն մի տառի ներկայացման ժամանակ աշակերտը և ծնողը միասին դասին հաղորդում են հետաքրքիր ,բովանդակալից, յուրահատուկ տեսք,համագործակցելով ուսուցչի հետ:Այն ունենում է դրական արդյունք և երեխայի մեջ օրվա դասը ավելի տպավորիչ է դառնում:

Դասղեկը մեծ ուշադրություն պետք է դարձնի դասարանի ծնողների տեղեկացվածությանը, որը օգնում է ծնողների մանկավարժական մտածելակերպի և դաստիարակչական հմտությունների ձևավորմանը: Ծնողների մասնակցության ձևերից մեկը դպրոցի և դասարանի ծնողական խորհրդի գործունեությունն է: Ծնողական խորհրդի անդամներ են դառնում ամենաակտիվ և փորձառու ծնողները: Ծնողական

խորհրդի նիստերը անց են կացվում ամիսը մեկ անգամ, սակայն անհրաժեշտության դեպքում կարելի է անցկացնել նաև երկու անգամ: Դասարանի ծնողական խորհրդի ներգրավում է ծնողների արտադասարանական միջոցառումների կազմակերպման ու անցկացման գործերին:

Ծնողների հետ աշխատանքի մի հետաքրքիր և արդյունավետ ձև է նաև ծնողական համալսարանը, որի նպատակը համալրել ծնողների մանկավարժական և հոգեբանական գիտելիքները, ծանոթացնել նրանց դաստիարակության ժամանակակից խնդիրներին:

Ծնողական համալսարանում պարապմունքները կարող են անցկացվել զանազան ձևերով՝ կոնֆերանսներ, հարց ու պատասխաններ, դասախոսություններ, սեմինարներ և այլն:

Երեխաների ընտանիքների ուսումնասիրությունը դասղեկին հնարավորություն է տալիս ավելի լավ ճանաչելու երեխային, հասկանալու նրա ընտանեկան դրությունը, ճանաչելու նրա ավանդույթները, հոգևոր արժեքները, ծնողների և երեխաների փոխհարաբերությունները և այլն: Ընտանիքների ուսումնասիրության համար դասղեկը կարող է հոգեբանամանկավարժական հայտորոշման տարբեր մեթոդներ կիրառել, օրինակ՝ զրույցներ, թեստեր, հարցաթերթիկներ, գործնական և ինտերակտիվ խաղեր, սեմինարներ:

Գործնական աշխատանքի տարբեր ձևերը հնարավորություն են տալիս ծնողներին պարզելու, թե երեխաների դաստիարակության հարցում ինչն է իրենց հաջողվում, ինչն ուղղելու կարիք ունի և ինչն է թերի մնում: Ցանկացած ծնող պետք է գիտակցի, որ երեխայի դաստիարակության հիմնաքարը դրվում է ընտանիքում[2]:

Երբեմն ծնողները հրաժարվում են մասնակցել ծնողական ժողովներին և խուսափում են դասղեկի հետ հանդիպելուց: Սակայն չպետք է զարմանալ, քանի որ հաճախ ծնողական

[2] Инклюзивное образование в России
Url:// http://psyjournals.ru/edu_economy_wellbeing/issue/36287_full.shtml:

ժողովներն ու հանդիպումները վերածվում են վեճի, որտեղ ոտնահարվում է ծնողի արժանապատվությունը: Դասղեկը պետք է միշտ հիշի և հասկանա, որ ծնողական ժողովի նպատակը դասարանում ծագած խնդիրների քննարկումն ու ծնողների օգնությամբ այդ խնդիրների լուծման ուղիներ գտնելն է:

Թեմատիկ և անհատական խորհրդատվություն անց է կացվում ծնողների ցանկությամբ կամ դասղեկի խորհրդով, եթե ծնողները երեխայի դաստիարակության ընթացքում բախվում են խնդիրների, որոնք ի վիճակի չեն ինքնուրույն լուծելու կամ խուսափում են դժվար իրավիճակներում որևէ որոշում կայացնելուց:

Նմանատիպ խորհրդատվություններին պետք է մանրակրկիտ նախապատրաստվել: Այդ ընթացքում անհրաժեշտ է զրուցել երեխայի, նրա մտերիմների և մանկավարժների հետ, ընդ որում դա պետք է կատարել շատ զգույշ և խելացի կերպով: Յուրաքանչյուր խորհրդատվություն ենթադրում է ոչ միայն խնդիրների քննարկում, այլ նաև գործնական խորհուրդներ այդ խնդիրների լուծման վերաբերյալ: Միշտ չէ, որ դասղեկը ի վիճակի է նմանատիպ խորհրդատվություններ անցկացնել, ուստի երբեմն հարկ է լինում այդ խնդիրների լուծմանը ներգրավել նաև այլ մասնագետների:

Խորհրդատվություն անցկացնելիս պետք է իմանալ.

- Խորհրդատվությունն անց է կացվում ծնողների, երեխայի և դասղեկի խնդրանքով,
- Քննարկվող խնդիրը դասղեկին պետք է հայտնի լինի, որը նա պարտավոր է ուսումնասիրել տարբեր տեսանկյուններից՝ երեխայի, ծնողների, մանկավարժների,
- Խորհրդատվության ընթացքում անհրաժեշտ է հնարավորություն տալ շահագրգիռ կողմերին՝ արտահայտելու իրենց տեսակետներն ու վերաբերմունքը խնդրի վերաբերյալ,

- Խորհրդատվության մասնակիցները, որոնք փորձում են օգնել ծնողներին, պետք է մանրամասն ծանոթ լինեն քննարկվող խնդրին,
- Խորհրդատվությունը պետք է անցնի բարեկամական մթնոլորտում, առանց սպառնալիքների և վիրավորանքների,
- Խորհրդատվության ընթացքում անհրաժեշտ է նախ ներկայացնել երեխայի բոլոր դրական հատկանիշները, ապա նոր միայն խոսել եղած խնդիրների մասին,
- Խորհրդատվության ընթացքում երբեք չի կարելի մի երեխային համեմատել մյուսի հետ, այլ հարկավոր է միայն խոսել նրա նախկին դրական հատնանիշների և հաջողությունների մասին և դրանք համեմատել ներկայիս թերությունների և դժվարությունների հետ,
- Խորհրդատվության ընթացքում մասնագետները, մանկավարժներն և դասղեկը պետք է ծնողներին գործնական խորհուրդներ տան,
- Խորհրդատվությունը պետք է լինի հեռանկարային և նպաստի ընտանիքում ծագած խնդիրների դրական լուծմանը,
- Խորհրդատվության արդյունքները չպետք է քննարկման առարկա դառնան կողմնակի մարդկանց համար,

Դասղեկ-ծնողներ հանդիպման ժամանակ պետք է իր մեջ ներառի հետևյալ հինգ կարևոր բաղադրիչները.

1. Դասարանի աշակերտների առաջադիմության վերլուծություն:

   Դասղեկը ծնողներին ներկայացնում է դասարանի ուսումնական գործունեության ընդհանուր արդյունքները: Նախապես պետք է զգուշացնել ծնողներին, որ նրանք իրենց հետաքրքրող մասնավոր հարցերը կարող են տալ միայն անհատական հանդիպման ժամանակ: Ծնողական ժողովի մասնակիցներին ներկայացնելով դասարանում դասավանդող ուսուցիչների կարծիքը, հայտնելով նրանց այս կամ այն

եզրակացությունը՝ դասղեկը պետք է զերծ մնա իր սուբյեկտիվ կարծիքն ու վերաբերմունքն արտահայտելուց:

2. Դասարանում տիրող սոցիալհոգեբանական մթնոլորտի ներկայացում:

Դասեկը ներկայացնում է տարբեր իրավիճակներում երեխաների վարքի վերաբերյալ իր դիտարկումները: Քննարկման թեմա կարող են լինել նաև աշակերտների փոխհարաբերությունները, նրանց խոսքը, արտաքին տեսքը և շատ այլ հարցեր: Ծնողաները պետք է հասկանան, որ դպրոցը սոցիալականացման այն ինստիտուտն է, ուր երեխաները այլ մարդկանց հետ համագործակցելու փորձ են ձեռք բերում, որն ավելի կարևոր է, քան գիտելիքների քանակը: Ավելորդ է հիշեցնել դասղեկներին, որ նրանք պետք է խիստ նրբանկատ լինեն, խուսափեն բացասական գնահատականներ տալուց երեխաներին ու, առավել ևս, նրանց ծնողներին: Ժողովի այս բաժինը չի կարելի վերածել աշակերտների <<մեղքերի>> թվարկման ժամի:

3. Հոգեբանամանկավարժական խորհրդատվություն: Անհրաժեշտ է հասկանալ, որ ծնողների հոգեբանամակավարժական մակարդակի բարձրացումը դասղեկի աշխատանքի գլխավոր խնդիրներից մեկն է: Դրա համար կարելի է ծնողներին ծանոթացնել մանկավարժական գրականության նորություններին, կազմակերպել կլոր սեղաններ, կինոդիտումներ, այցելել ցուցահանդեսներ և այլն:

4. Կազմակերպչական աշխատանքների քննարկում: Կազմակերպչական աշխատանք-ների քննարկումը բաղկացած է երկու բաղադրիչներից՝ կատարած աշխատանքի հաշվետվություն և տեղեկություն ընթացիկ գործերի վերաբերյալ: Պետք է նշել, որ բոլոր ֆինանսական հարցերը հարկավոր է նախապես քննարկել ծնողական խորհրդի հետ:

5. Անհատական զրույց ծնողների հետ:

Դասղեկի ուշադրության առարկան այն երեխաների ծնողներն են, ովքեր ուսման և զարգացման որոշ խնդիրներ ունեն: Դժվարություն է առաջացնում այն փաստը, որ նման

աշակերտների ծնողները, խուսափելով քննադատություններից, ծնողական ժողովներին չեն ներկայանում: Դասղեկը պետք է օգնի նրանց հասկանալու, որ այստեղ երեխային ոչ թե դատում, այլ փորձում են օգնել: Դասղեկի համար առանձնակի մտահոգություն են ներկայացնում <<դժվար>> երեխաները և այն աշակերտները, որոնք մշտապես հետ են մնում որոշ ուսումնական առարկաներից: Ուսումնական տարվա սկզբում դասղեկը պետք է դասավանդող ուսուցիչների ուշադրությունը հրավիրի այն երեխաների վրա, որոնց վարքը անբավարար է: Երեխաների վատ պահվածքը կարող է կապված լինել ընտանեկան խնդիրների, երեխայի առողջության, հաղորդակցման դժվարությունների և բնավորության առանձնահատկությունների հետ[3]: Դրա համար դասղեկը կարող է դպրոցի ղեկավարության հետ համատեղ կազմակերպել և անցկացնել քննարկումներ մանկավարժների հետ՝ <<Իմ դասարանի դժվար երեխաները>> թեմայով: Այսպիսի նիստերին ներկա են լինում դասավանդող ուսուցիչները, դասղեկը և դպրոցի ղեկավարությունը, որոնց նպատակն է քննարկել և գտնել երեխաների ուսման և վարքի խնդիրների լուծման ուղիները: Խնդրահարույց աշակերտների հետ տարվող աշխատանքները կազմակերպելիս անհրաժեշտ է՝

- Երեխայի ծնողներին հրավիրել անհատական և թեմատիկ զրույցների,
- Այցելել երեխաների ընտանիքները, ուսումնասիրել նրանց կենցաղային պայմաններն ու ընտանեկան դրությունը,
- Երեխաների համար կազմակերպել լրացուցիչ պարապմունքներ, դասավանդող ուսուցիչների խորհրդատվություն և դասընկերների օգնություն,
- Ներգրավել աշակերտներին ֆակուլտատիվների ու խմբակների աշխատանքներում,

[3] Ռ. Մուրադյան, Մ 992 Դասղեկ, Նոր մոտեցումներ դաստիարակչական աշխատանքներում, Երևան, Գիտություն, 2007, էջ 192:

- Ներգրավել երեխաներին առարկայական միջոցառումների և երեկույթների կազմակերպմանը,
- Անցկացնել թեմատիկ դասղեկական ժամեր և այլն:

Ծնողների և ուսուցիչների իրական համագործակցությանը միշտ հետևում են դրական արդյունքներ՝ ձևավորվում է փոխադարձ վերահսկողություն, ծնողներր և ուսուցիչներն աշխատում են որպես մեկ խումբ, որպեսզի յուրաքանչյուր երեխայի համար ստեղծեն եզակի և հետաքրքիր ուսուցման փորձություն, երեխաները շահում են մեծահասակների համագործակցող խմբի հետ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Դասը հասկանալի և ըմբռնելի է դառնում պահպանելով ծնող_ուսուցիչ_աշակերտ կապը:Համագործակցության մեթոդը ամենաարդյունավետ մեթոդներից մեկն է,որը անպայման տալիս է իր դրական արդյունքը:Մեթոդը կարելի է կիրառել հաճախ:Պահպանելով լավ հարաբերություններ ծնողների հետ, ուսուցման գործընթացը դառնում է ավելի հետաքրքիր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Սխալված աշակերտի վրա մի բարկանա, որովհետև հիվանդն իր կամքով չի հիվանդանում>>

Ե. Կողբացի

Հասարակության մեջ կատարվող արմատական փոփոխությունները էական ազդեցություն են ունենում նաև դպրոցի վրա: Առավել դժվար իրավիճակներում են

հայտնվում երեխաները, որոնք այդ անցումային շրջանում ավելի շատ են զգում խորհրդի, օգնության, քնքշանքի և պաշտպանության կարիք: Աճող սերնդի ճակատագիրը կախված է դաստիարակության կայուն համակարգից: Այդպիսի համակարգ ստեղծելու համար ուսումնական հաստատությունները պետք է մի շարք հիմնախնդիրներ լուծեն, որոնցից են՝ դաստիարակության գործընթացի զարգացումը, մանկավարժական կազմի համալրումը վերապատրաստված մասնագետներով և այլն: Աշխատանքում մենք ներկայացրեցինք դասղեկ-ծնող-դպրոց կապի անհրաժեշտությունը, և այդ կապի ազդեցությունը երեխաների ուսուցման և դաստիարակության գործընթացի վրա: Արդեն ապացուցված է, որ դաստիարակությունը հաջողություն է ունենում, եթե ընտանիքի հետ տարվող աշխատանքն ու երեխայի դաստիարակությունը կատարվում են միաժամանակ: Դրա համար դասղեկը պետք է ծնողների հետ նախապատրաստական գործունեություն ծաավալի, քանի որ այսօրվա պայմաններում առանց ընտանիքի հետ հիմնական աշխատանքի, հնարավոր չէ արդյունավետ աշխատել դասարանի հետ: Չ՞է որ աշակերտների ընտանիքները նույնանման չեն. տարբեր են նրանց սոցիալական պայմանները, երեխաների նկատմամբ վերաբերմունքն ու բարոյական նորմերը: Իսկ այդ ամենն ազդում են երեխայի առողջության, հոգեվիճակի, ուսման և ինքնուրույնության վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ռ. Մուրադյան, Դասղեկ, Նոր մոտեցումներ դաստիարակչական աշխատանքներում, Երևան, Գիտություն, 2007, էջ 192,
2. Մանկավարժություն URL:// http://www.northern.am/index.php
3. Инклюзивное образование в России

Url:// http://psyjournals.ru/edu_economy_wellbeing/issue/36287_full.shtml

4. Инклюзивное образование

URL:// http://www.mou13school.narod.ru/inklyuziv_obr.html